ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՐԱԳԱ ԽԱՉԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարագա խաչի պատմությունը, որ միջնադարյան ձեռագրերում հայտնի է մի քանի տարբերակներով, ներառում է ժամանակային երեք շերտ ունեցող հետևյալ երեք միավորները.

ա. Պատմութիւն գիւտի Սուրբ Խաչին ի ձեռն Պատրոնիկեայ թագուհւոյն կայսերն Կոստանդեայ

բ. Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց

գ. Պատմութիւն Վարագայ Սրբոյ Խաչին:

Այս գործերի վերնագրերից իսկ երևում է, որ առաջինը նվիրված է խաչափայտի առաջին գյուտին, երկրորդը՝ Հռիփսիմեի կողմից խաչափայտի մասունքի՝ Հայաստան բերելուն եւ Վարագում թաքցնելուն, իսկ երրորդը՝ Վարագում նրա հրաշալի վերահայտնությանը: Առաջին երկուսը նախընթաց պատմություններն են, որ նպատակ ունեն բացատրելու Խաչի Հայաստան բերվելն ու Վարագում ամփոփվելը: Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո կենարար խաչափայտը գտնվում էր Գողգոթայում՝ լքված եւ մոռացված: Հակոբոս Տյառնեղբոր՝ Երուսաղեմի անդրանիկ եպիսկոպոսի օրոք՝ երեխաների խաղալու ժամանակ մի կաղ մանուկ պատահաբար դիպչում է Քրիստոսի կենսատու խաչափայտին ու բժշկվում: Շուտով այս մասին հայտնի է դառնում քաղաքում, եւ ամեն կողմից կույրեր, կաղեր ու բորոտներ Գողգոթա են շտապում՝ բժշկություն ստանալու: Տեսնելով այս՝ հրեաները որոշում են խաչափայտը տեղադրել տաճարի «գեղեցիկ» կոչված դռան մոտ: Խաչափայտի առաջին գյուտին նվիրված պատմության մեջ այս մասին ասվում է. «Եդին առ գեղեցիկ դրան տաճարին, յոր մերձեալ ուրուկ մի սրբեցաւ, եւ կոյր մի բացաւ»[1]: Ապա խաչափայտը թաքցնում են Քրիստոսի հարության այրի մեջ, որտեղ «լոյս հրաշալի ելանէր ընդ ծերպ վիմին»[2]:

Հետագայում Քրիստոսի գերեզմանի մուտքի մոտ կանգնեցնում են Աֆրոդիտե չաստվածուհու արձանը՝ պատահելիք հրաշքները վերջինիս վերագրելու նպատակով: Այս ժամանակ է, որ Հռոմի Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկեն, դարձի գալով, ուխտավորաբար Երուսաղեմ է ճանապարհվում երեք որդիների եւ երկու դուստրերի հետ՝ տերունական վայրերին հարգանք մատուցելու[3]: Այստեղ թագուհին հանդիպում է Տյառնեղբորն ու առաք-

1 Հ. Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 547:

2 Երեւանի Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 5228, Ճառընտիր, «Պատմութիւն Վերացման Խաչին»:

3 ՄՄ, ձեռ. 4716, Ճառընտիր, «Պատմութիւն գիւտի Սուրբ Խաչին ի ձեռն Պատրոնիկեայ թագուհւոյն կայսերն Կոստանդեայ», էջ 275ա:

յալի օգնությամբ գտնում է թաքցված խաչափայտերը: Ինչպես վկայում է ավանդությունը, թագուհու դուստրերից մեկն ապտվածային նախախնամությամբ հանկարծակի մահանում է, ապա հարություն է առնում Տիրոջ խաչափայտին հպվելով, որից հետո Պապրոնիկեն Հռոմ է վերադառնում՝ խաչափայտից մի մասունք պահելով, իսկ Հակոբոս առաքյալը խաչափայտը դնում է եկեղեցում եւ Ծաղկազարդից սկսած մինչեւ սեպտեմբերի 14-ը ամեն կիրակի առավոտյան եւ երեկոյան դուրս է բերում ու վերացնում (բարձրացնում)՝ արտասանելով՝ «Խաչի Քո, Քրիստո՛ն, երկիր պագանեմք եւ բարեբանեմք»:

Այս երկու պատմությունները, անկախ նրանից, թե որքանով են ինքնուրույն միավորներ եւ որքանով են կենցաղավարում որպես առանձին պատմություններ, ծառայում են մեկ հիմնական նպատակի՝ հավաստել Վարագում պահվող մասունքի վավերականությունը:

Երեք պատմություններից առաջին երկուսի՝ հաջորդաբար մեկը մյուսին լրացնող օղակներ լինելն արտահայտվել է նաեւ նրանց մասին եղած գրական բնագրերում:

Պապրոնիկեի մասին պատմություններն ավարտվում են գրեթե անպայմանորեն Հռիփսիմյանց հիշատակությամբ, թե այնուհետեւ այդ մասունքը տրվելու էր նրան: Հռիփսիմյանց պատմություններում երբ խոսվում է այս մասունքի եւ այն Հռիփսիմեին հանձնելու մասին, անպայման հիշատակվում է Պապրոնիկեի պատմությունը, իսկ Վարագա խաչին նվիրված գործում հիշվում են առաջին երկու պատմությունները: Այս երեքը, իրար միահյուսված որպես ամբողջական մեկ գործ, հանդես են գալիս Հայամավուրքի՝ Խլաթեցու խմբագրությունում:

Չնայած հիշյալ պատմության հայամավուրքային տարբերակն առավել ամբողջական է, որը հիմք ենք ընդունել Վարագա Սուրբ Նշանի պատմությունը ներկայացնելու համար, սակայն միջնադարյան ձեռագիր ժողովածուներում առկա են առանձին միավորներ, որոնք կարեւոր հավելումներ ունեն: Այսպես՝ Պապրոնիկե թագուհու մոտ պահված Սուրբ խաչի վերաբերյալ 4716 համարի ձեռագիրը բերում է մի շարք կարեւոր տեղեկություններ, որոնք կա՛մ բացակայում են եւ կա՛մ այլ կերպ են ներկայացված հայամավուրքային տարբերակում եւ թ. 5228 ձեռագրում[4]: Դարգելու համար այս երկու ձեռագրերի եւ հայամավուրքային խմբագրության միջեւ եղած լեզվառճական տարբերությունները՝ ստորեւ մեջբերենք հիվանդ երեխայի՝ խաչափայտին դիպչելով բուժվելու հատվածները:

Ձեռ. 4716

Յաւուր միում տղայքն ի խնդիր ծաղկանց շրջէին յայնմ տեղւոջ եւ վազէին ասր եւ անդ եւ ծաղիկս քաղէին, զի զարմանալին էր ժամանակն եւ մերձ Գողգոթային շինութիւն ոչ էր քաղաքն, զի պարտէզ էր տեղին: Եւ ի վազել տղայոցն ի քաղել զծաղիկսն կաղ տղայ մի, տկար ի յոտիցն, ջանայր եւ ինքն վազել զհետ ընկերացն: Որպէս եւ է սովորութիւն բարոյ տղայոցն, երթայր երբեմն կաղալով: Եւ հասեալ ի հոսչափայտին Քրիստոսի եւ առժամայն զօրացեալ եւ յարուցեալ վազէր զհետ ընկերացն:

4 5228 եւ 4716 համարների ձեռագրերի բնագրերը վերցրել ենք Գեղամ սարկավագ Տիգրանյանի (այժմ Արքեպ. Տիգրանյան) ավարտրաճառից:

Ձեռ. 5228

Եւ ի բուսաբեր եւ ծաղկազարդ երկրի գարնանայնոյ սովոր էին մանկունք գրանոյ ի վերայ դպրարոյ: Յայնմ ժամանակի մանուկ մի կաղ եւ սոսն ի ծնէ, ինչ ինգերան երթեալ յարեցաւ ի խաչն Աստուածամուխ եւ առժամայն յարուցեալ վազէր եւ աւրհնէր զԱստուած եւ զոհանայր զկենդանակիր նշանէն եւ զեկեալ հաւատացելոցն՝ զդպրին աւրհնութիւն Աստուծոյ:

Յայսմաւուրք

Եւ Գողգոթայն էր յայնմ ժամանակին ի զարդ եւ բացեալ ի գրանց եւ ի բնակութեանց: Եւ աւուրքն էին գարնանային, եւ դդարքն եկեալ ի քաղաքէն ասր եւ անդ, որպէս եւ է սովորութիւն մանկանցն վազել զհետ ծաղկանց: Եւ մի սասպրար դդայ գնաց սոդալով ի բարշ ինչ այլ մանկանցն, բայր բարուց դդայոցն ի սէր ինկերացն եւ ի գեղութիւն ծաղկանց եւ այնպէս գնացեալ սոդալով հպեցաւ ի հոսչն Քրիսդոսի յաղժամանակն պնդեալ ոդիւք եւ հաւատալեալ անդամօք յարուցեալ վազէր եւ գնայր զհետ ինկերացն, զոր գեղեալ բազմաց՝ հիացան:

Ինչպես տեսնում ենք, թ. 5228 ձեռագիրն առավել սեղմ, բայցեւ կառուցիկ ու ընդհանրացված է ներկայացնում հարվածը: Այն նաեւ լեզվառճական առումով ավելի է մոտենում դասական գրաբարին: Եթե մյուս երկու ձեռագրերում որեւէ բնորոշում չի տրվում Խաչափայտին, ապա այստեղ այն անվանվում է *կենդանակիր եւ աստվածամուխ:* Քրիստոս ասում է. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԱ 25), որի համար խաչափայտն այստեղ բնորոշվում է որպես կենդանակիր: Աստվածամուխ նշանակում է Աստվածությանը միված, խոցած, եւ այս բնորոշումը խաչափայտի համար փոքր-ինչ անսովոր է: Մեր մատենագրության մեջ այսպես է անվանվում Սուրբ Գեղարդը, քանի որ այն խոցեց Աստծո կողը:

Երկու ձեռագրերում էլ գարնանային գեղեցիկ պատկերով է ներկայացվում խաչափայտը գտնելը, որը պարունակում է նաեւ հոգեւոր՝ այլաբանական խորհուրդ: Եւ Քրիստոսի հարությունը խորհրդանշող գարնանը ծաղիկները հավաքելու եկած երեխաները գտնում են հոգեւոր գանձը՝ Տիրոջ խաչափայտը:

Նկատենք, որ թ. 4716 ձեռագրի գրաբերակն առանձնանում է գեղարվեստական արժեքով եւ խորհրդաբանությամբ: Խոսելով հիվանդ մանկան մասին, որ պատահաբար դիպչում է կենսապարգեւ խաչափայտին եւ բժշկվում, սույն ձեռագիրը բերում է հեքիաթյալ նկարագրությունը, որը չկա գործի հայամավուրքային գրաբերակում, ինչպես նաեւ թ. 5228 ձեռագիր ժողովածուում. «Եւ այր ոմն ի հեռասպանեալ եղեալ զմանուկն, որ եհաս սոդալով ի փայտն եւ առողջացաւ»[5]:

Սույն ձեռագիրն ունի մի էական գրաբերություն, որ հիմնավորում է հեքիաթա շարադրանքը եւ բացատրում, թե ինչ խորհրդով է, որ Քրիստոսի խաչափայտը, տեղից տեղ գրավելով, չի զարվում ավազակների խաչերից:

Այն թ. 4716 ձեռագրում բժշկված երեխայի համար ասվում է, թե «այնքան գիմար էր դդայն, որ ոչ կարաց գիտել, թէ յոր փայտ հպեցաւ... զի Գ խաչափայտն անկեալ կային ի

5 Ձեռ. 4716, «Ճառընտիր», էջ 275բ:

գեպնի»: Մանկան բժշկումը պեսնողը նույնպես չի կողմնորոշվում, թե երեք խաչերից ո՞րը դարձավ բժշկության պատճառ: Ուստի խաչի փրկագործ զորությանը չհավատացողները երեքն էլ պանում եւ դնում են պաճարի դռանը: Այսպեղ, երբ մի ուրուկ անցնելիս բժշկվում է, դարձյալ չեն իմանում, թե ո՛րին դիպավ: Այսպիսով երեքն էլ համաժամանակ են պեղաշարժվում, որով եւ միասին են գպնվում Պատրոնիկեի որոնումներից հետո:

Թ. 5228 ձեռագիրը ոչինչ չի ասում երեք խաչերի՝ միասին պարվելու մասին, իսկ Հայսմավուրքում պարզապես նշվում է, որ երեքն էլ տեղից տեղ պարան, սակայն հստակորեն չի ընդգծվում, որ պատճառը նրանց միմյանցից չպարբերելն էր:

Հայպնի է, թե ինչպիսի՛ մեծահնար ջանքեր են գործադրվել՝ ծածկելու եւ այդկերպ մերժելու համար Աստծո Միածին Որդու անունը: Նման «հետեւողականությունը» շեշպված ձեւով շարունակաբար հանդես է եկել հընթացս Տիրոջ թե՛ երկրային պնօրինականքի եւ թե՛ հետո: Ահա այս է պատճառը, որ գրիչները մի հատուկ եւ մասնավոր դիպավորությամբ ցանկացել են ընդգծել, մի տեսակ աստիճանական զարգացման ենթարկել այն գաղափարը, ըստ որի՝ Տիրոջ խաչափայտն իբրեւ այդպիսին ծածկված ու անհայտ է եղել մարդկային «անգիպությունից»: Ձեռագրերն առլեցուն են ասվածը վկայող օրինակներով: Տեսնելով Պատրոնիկեի նախանձախնդիր կեցվածքն ու համոզվելով, որ այլեւս ամեն տեսակի դիմադրություն իզուր է՝ Երուսաղեմի բնակիչները որոշում են ցույց տալ խաչափայտերի տեղը: Ահա այս ժամանակ է թագուհու դուստրերից մեկը հանկարծամահ լինում, որին ի տես Հակոբոս առաքյալն ու Պատրոնիկեն կարծեք թե մի պահ շփոթվում են՝ չիմանալով ինչ անել: Կարծում ենք, որ այս նկատումը եւս պատահական չէ. գրիչը ցանկացել է նշել, որ թե՛ Տիրոջ առաքյալը, թե՛ Պատրոնիկե թագուհին, թեեւ Աստծո կամքը կատարողներն են եւ այս իմաստով աստվածային ազդմամբ գործող մարդիկ, բայց եւ օժտված են անկյալ մարդուն բնորոշ թերահավատությամբ, որի արդյունքում կարող են շփոթվել եւ անմիջապես չզգալ աստվածային նախախնամությամբ կատարվածը, իսկ մեկ ուրիշը, դիցուք՝ թագուհու ավագ որդին, աստվածատուր մտքի ներգործությամբ կարող է իմաստնանալ ի: Ըստ որում՝ նրա խոսքերը միանգամայն ճիշտ ներգործություն կարող են ունենալ շրջապատող աշխարհի վրա, ինչպես այստեղ: Թագուհու որդին, դիմելով մորը եւ առաքյալին, ասում է, որ իր քրոջ մահը աստվածային նախախնամությամբ եղավ, որպեսզի այս ձեւով պարզվի, թե ո՛րն է Տիրոջ խաչափայտը. ուստի երեք խաչափայտերը պետք է հերթով մոտեցնել քրոջը եւ որի հպումից որ նա կենդանանա, դա է Քրիստոսի խաչափայտը: Որդու խոսքերը համոզիչ են թվում թագուհուն ու Հակոբոսին, որոնք որոշում են խաչափայտերը հաջորդաբար մոտեցնել մահացածին: Առաջինի դեպքում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում, երկրորդի ժամանակ մահացածը կենդանության նշաններ է ցույց տալիս՝ շարժում է աջ ոտքը եւ բացում աչքը, իսկ երբ մեռյալի վրա դնում են երրորդ խաչափայտը, դուստրը կենդանանում է[6]: Գրիչը մեկնաբանում է, թե ըստ էության առաջին խաչափայտը ձախակողմյան ավազակինն էր, քանի որ ոչ մի նշան չերեւաց, որովհետեւ այս ավազակը Գողգոթայում խաչափայտի վրա ոչ միայն չի հավատում, այլեւ Հիսուսին ասում է. «Դու չե՞ս Քրիստոսը, փրկի՛ր ինքդ քեզ եւ մեզ» (Ղուկ. ԻԳ 39): Երկրորդը աջակողմյան ավազակինն էր, որով կենդանության նշաններ երեւան եկան, որովհետեւ նա, սաստելով ձախակողմյան ավազակին, ասում է. «Աստծուց չե՞ս վախենում,

6 Անդ:

դու, որ նույն պապիժն ես կրում: Եւ մենք իրավացիորեն արժանի հապուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որեւէ վատ բան չի արել»: Եւ ասաց Հիսուսին. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս քո թագավորությամբ»: Եւ Հիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 41-43):

Իսկ երրորդը Տիրոջ կենսապարգեւ խաչափայտն էր:

Նույն դրվագը բերված է նաեւ Հայսմավուրքում, այն տարբերությամբ միայն, որ այստեղ նախ խոսվում է աջակողմյան եւ ապա ձախակողմյան ավազակի խաչափայտի մասին: Այս տարբերությունը մտորելու առիթ էտալիս. թեեւ երեք խաչափայտերի այս պատմությունը, մեր կարծիքով, առավել խորհրդաբանական է, քան պատմական, սակայն մի բան պարզ է, որ միջնադարյան գրեթե բոլոր հեղինակները, որպես կանոն, դիմել են պատկերավոր արտահայտությունների, եւ ոչ պատահականորեն: Որքան էլ ճկուն լինի մարդկային միտքը եւ խելահաս, միեւնույն է, անկարելի է սեղմ ու ամփոփ բառերով ճիշտ պատկերացում կազմել աստվածային այնպիսի երեւույթների մասին, որպիսիք հնարավոր չեն մեկ խոսքով արտահայտել: Այն, ինչ մարդն զգում է աստվածային միջամտության պահին, դժվար է հետագայում պարզ բառերի միջոցով արտահայտել:

Հետաքրքրական է հատկապես պատմության այն մասը, երբ Պատրոնիկե թագուհին ցանկանում է խաչափայտից մասունք ունենալ: Թ. 5228 ձեռագիրը սեղմ եւ ամփոփ կերպով, թ. 4716 ձեռագիրը, ինչպես նաեւ Հայսմավուրքը բերում են մի պատմություն, համաձայն որի Պատրոնիկեն առաքյալից խաչափայտի մասունք է խնդրում, իսկ վերջինս սուրը մոտեցնում է խաչին, սակայն չի դիպցնում, այլ խորհուրդ է տալիս աղոթք առաքել առ Աստված, քանի որ պատշաճ չէր սուր բարձրացնել Տիրոջ խաչափայտի վրա: Այս պատճառով առաքյալն ու թագուհին ամբողջ գիշեր աղոթք են վերընծայում առ Աստված, իսկ առավոտյան տեսնում են, որ խաչափայտից մասունք է հատված: Դա այն բեկորն էր, որի վրա կաթել էր Տիրոջ փրկարար արյունը, ինչպես նշվում է բնագրում.

Ձեռ. թ. 5228

Կայսրուհին խնդրէ մասն ինչ յառաքելոյն ի կեցուցիչ խաչէն եւ առեալ գնայ ի Հոռմ:

Ձեռ. թ. 4716

Եւ սուրբ Յակոբ եղ սուր մերձ Սուրբ Խաչին եւ արար աղօթս երկար ինքն եւ թագուհին եւ հակումն գիշերոյ ամբողջ հաւատացելովքն ի Քրիստոս, եւ հատաւ հրաշիւք առանց ձեռին մարդոյ, մաճեալն աստուածային արեամբ, զոր առեալ Տեառնեղբայրն Յակովբոս երկրպագեաց փառաբանօք, ահիւ մեծաւ եւ եւր թագուհոյն:

Յայսմաւուրք թ. 74

Իսկ սուրբն Յակոբ Տեառնեղբայրն տեսեալ զջերմեռանդն յոյս եւ զհաւատս կուն հաւատս թագուհոյն, եղ զսուրն աղօթիւք մերձ Սուրբ Խաչին եւ զգիշերն հակնամբ հանեալ ի գլուխ յաղօթս Աստուծոյ սուրբ եւ մաքուր մտօքն իւրովք

արդարն Յակոբոս եւ վաղիւն տեսին, զի հապեալ էր ի խաչափայտէն մածեալն ասպուածային արեամբն:

Այս պատմությունն աղերսվում է մեկ այլ, ոչ պակաս նշանավոր դրվագի հետ: Երբ տեղի է ունենում Տիրոջ գերեվարված կենսատու խաչափայտի գերեդարձը Պարսկաստանից Երուսաղեմ, (VII դ.)թափորը դադար առնելու նպատակով մի կարճ ժամանակով հանգրվանում է հայոց Արտազ գավառում, ուր եւ գալիս է Սյունյաց Բյուրեղ իշխանուհին՝ Խաչափայտին երկրպագելու եւ ընծաներ մատուցելու: Բյուզանդական Հերակլ կայսրը, տեսնելով Սյունյաց տիրուհու նվիրումն ու անօրինակ հավատքը, ինչպես նաեւ բարձր գնահատելով նրա բերած աջակցությունը խաչափայտի գերեդարձին, խոստանում է կատարել նրա ցանկացած խնդրանք: Իշխանուհին խաչափայտից մասունք է խնդրում: Հերակլը պատճառաբանում է, թե չի կարող խաչի վրա սուր բարձրացնել: Ինչպես Անանուն Զրուցագրի պատմության մեջ է ասվում, ի պատասխան Սյունյաց տիկնոջ խնդրանքին, Հերակլը պատասխանում է. «Զի՞արդ կարացի սուր մերձեցուցանել ի կենսաբեր փայտ խաչին Քրիստոսի, որ այսչափ աշխատութեամբ» ազատել եւ ետ է դարձնում գերությունից[7]:

Այստեղ ասվում է, որ ներկա էր «այր փիլիսոփայ» Հովհան Մայրագոմեցին, եւ նա Հերակլին ասում է. «Խաչի պահարանի մեջ սո՛ւր դիր եւ Սյունյաց տիկնոջն ասա, որ աղոթի, եւ եթե Աստծուն հաճո լինի խնդրանքը, նրան կտրվի իր ցանկացածը»: Այդպես էլ վարվում են, եւ Սյունյաց տիկինը տասներկու եպիսկոպոսների հետ ողջ գիշեր հսկում է կատարում, եւ երբ Հերակլն առավոտյան գալիս է, եւ բացում են կնքված երկաթյա պահարանը, տեսնում են, որ նրանից մի մասունք է հատվել, որը ցույց են տալիս Սյունյաց տիկնոջը, ու Հերակլն ասում է. «Ո՛վ կին դու, մեծ է հաւատ քո, եւ երանի է վիճակի Լուսաւորչին Սրբոյն Գրիգորի»[8]:

Այսպիսով՝ եթե խաչափայտից մասունքի առանձնացման պատմությունը հիշեցնում է խաչի գերեդարձի պատմությունը, ապա երեք խաչափայտերը թագուհու մահացած դստերը հպելու հատվածը կապվում է Հեղինե թագուհու ժամանակ կատարված խաչի գյուտի պատմությանը: Սակայն եթե խաչափայտի գյուտը տեղի է ունեցել Հեղինեի՝ Կոստանդիանոսի մոր ժամանակ, ապա այս դեպքում առաջանում է անլուծելի մի հակասություն, Հեղինեի՝ Երուսաղեմից տարած մասունքը ինչպե՞ս կարող էր Հռիփսիմեի մոտ հայտնվել, եթե նա այդ ժամանակ արդեն նահատակվել էր: Այս հարցին առաջինն անդրադարձել է Միքայել Չամչյանը՝ գրելով. «Այս պատմութիւն գիւտի խաչին ի ձեռն կնոջ Կղոդեայ կայսեր նոյն է, զոր յոյնք եւ լատինք, հայք եւ ասորիք աւանդեն լինել յաւուրս Հեղինէ թագուհւոյն՝ մօր Մեծին Կոստանդիանոսի»[9]:

Հակասությունը լուծելու համար Չամչյանն ասում է, որ եթե Հռիփսիմեի նահատակությունից հետո է եղել խաչափայտի գյուտը, «ապա պարտ է ասել, թէ այն խաչ Հռիփսիմեայ, որ յայտնեցաւ ի լեառն Վարագայ ակն յանդիման ազգին հայոց, ոչ էր խաչէն գտելոյ, այլ թերեւս ի մասնէ ինչ խաչափայտի յառաքելոց անտի մնացելոյ, զի հաւանականագոյն է ասել, թէ կային յաւուրս առաքելոց մասունք ինչ խաչափայտին Քրիստոսի ի ձեռս հաւատացելոց,

7 «Պատմութիւն Անանուն Զրուցագրի», աշխտ.՝ Մ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, 1971, էջ 65:
8 Անդ, էջ 65:
9 **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 548:

յորոց եւ մասն ինչ հասեալ է ի ձեռս թագուհւոյն եւ անտի ի ձեռս Հռիփսիմեայ»:[10] Չամչյանը չի կասկածում, որ Հռիփսիմեն իրապես խաչափայտի մասունքն է Հայաստան բերել: Պարզապես, ըստ Չամչյանի, այդ մասունքը ժամանակին տրվել է առաքյալներից մեկի կողմից: Սակայն քանի որ Պապրոնիկե թագուհու պատմությունն ազգային-եկեղեցական ավանդություն է, մենք այն ներկայացնում ենք՝ առանց անդրադառնալու նրա վավերականությանը. պարզապես մատնանշում ենք Հեղինեի եւ Հերակլ կայսեր պատմությունների հետ ունեցած ընդհանրությունները:

Պապրոնիկեն ճանապարհվում է դեպի Հռոմ՝ տանելով իր հետ փրկչական խաչի մասունքը: Սուրբ մասունքը, սերնդեսերունդ փոխանցվելով, հասնում է Հռիփսիմեին: Հայսմավուրքի՝ Չամչյանի վկայակոչած օրինակում այս մասին ասվում է. «Եւ այն մնաց անդ մինչեւ ի ժամանակս Հռիփսիմեայ, որ էր յազգէ Կողդեայ եւ Պապրոնիկեայ: Եւ յորժամ ծնօղքն Հռիփսիմեայ ընծայեցին ըզնա ի վանսն Սրբոյն Գայիանեայ, զայն մասն խաչին արկին ի պարանոց նորին»[11]: Այս մասունքը Հռիփսիմեին որպես «զէնն հոգեւոր» տրվում է՝ «Կնիք եւ պահապան կուսին ի ներգործութենէ չարէ»: Բավական հստակ եւ պատկերավոր նկարագրվում է Ս. Կուսանաց փախուստը, որով փորձության այդ պահին հաստատագրվում է վերջիններիս համոզումը Տիրոջ աղախինը լինելու մեջ, որից հետո՝ անցած ճանապարհն ու հայտնվելը Վարագում: Հստակ է, որ կույսերը փախուստի էին դիմել Հռոմից. բայց հարց է առաջանում՝ ինչո՞ւ. ահավասիկ այստեղ է, որ հայ հեղինակները բերում են ուշագրավ տեղեկություններ, ըստ որոնց տեսանելի է, որ Ս. կույսերը մի շարք վայրերում լինելուց հետո հրաման են առել գնալու «ի վիճակն Թադէոսի առաքելւոյն»:

Հռիփսիմյանց մասին առաջին եւ գլխավոր սկզբնաղբյուրը Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունն» է: Պատմիչը չի գրում, թե ինչ ճանապարհով նրանք Հայաստան եկան եւ այդ ճանապարհին ինչ տեղերում ու սրբավայրերում եղան, այլ միայն ասում է. «Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, զոր եւ Նորաքաղաքն կոչեն»[12]:

Հայոց դարձին նվիրված գործերի շարքում հնագույնը Խորենացուն վերագրվող Հռիփսիմյանց պատմությունն ու ներբողյանն են: Ըստ հիշյալ պատմության՝ Հռիփսիմեն արքայական ցեղից էր՝ Պապրոնիկե կայսրուհու տոհմից: Ի գնահատություն Պապրոնիկեի ջանքերի՝ Հակոբոս առաքյալը նրան մի մասունք էր ընծայել Տիրոջ խաչափայտի այն հատվածից, որի վրա կաթել էր Քրիստոսի կենարար արյունը: Այս մասունքը, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել էր Հռիփսիմեին, եւ նա այն կրում էր իր պարանոցին: Նույն պատմության համաձայն՝ Գայանեն եւս նույն տոհմից էր եւ Հռիփսիմեի ուսուցիչը՝ ավագանից ի վեր: Երբ «հասնում է հուզումնալից ժամանակը», Գայանեն, հոգու աչքերով իմանալով, որ նրան, ով փայլում է հոգով, ազնվական ծագման եւ սքանչելի գեղեցկության համար որոշել են կայսեր հետ ամուսնացնել, որոշում է կույսերի ողջ խմբով գաղտնի փախչել վանքից:

Ագաթանգեղոսի Պատմության հետեւողությամբ՝ Մաշտոցյան մատենադարանի թ. 6891 ձեռագրում ասվում է, թե երբ Դիոկղեդիանոս կայսրը որոշում է կին առնել, «պատ-

10 Անդ:
11 Անդ:
12 **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1983, էջ 90-92:

կերահաններ» է ուղարկում այս ու այն կողմ: Վերջիններս, ուժով մտնելով նրանց վանքը, տեսնում են Հռիփսիմեին ու զարմանում նրա գեղեցկության վրա. անմիջապես նկարելով՝ պատկերը տանում են թագավորին, որն էլ հրամայում է հարսանիքի պատրաստություն տեսնել եւ հրավիրում է իր տերության բոլոր նշանավոր մարդկանց: Կույսերը, լուրն առնելով, փախչում են: Դիոկղետիանոսն ապարդյուն որոնումների արդյունքում, թերեւս պարզելով, որ «փախստականները» Հայաստանում են, դեսպան է ուղարկում Հայոց Տրդատ արքայի մոտ՝ Վաղարշապատ:

Դեսպանի բերած հրովարտակի պատճենը ներկայացնում է Ագաթանգեղոսը: Ի հավելումն Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ այս վկայաբանության մեջ ասվում է, որ կույսերը, նավով փախչելով, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում լինելուց հետո որոշում են այցելել Երուսաղեմ՝ երկրպագելու Տերունական սրբավայրերը: Այստեղ սրբուհի Գայանեին բազմաթիվ աղոթքներ ու պաղատանքներ են մատուցվում, որպեսզի վերջինս օգնի վտանգված եւ օտար ափերում ապաստանած կույսին: Եւ երբ գնում են Գեթսեմանի, Գայանեն աղոթքով դիմում է Ս. Աստվածածնին՝ ասելով. «Մա՛յր Լուսո, Կո՛յս անարատ, որ կուսության վերակացու ես եւ սրբության օգնական, ընդունի՛ր աղերսական աղոթքներն անարժան աղախնուցս...»[13]:

Աստվածածինը տեսիլքով երեւում է կույսերին եւ հրաման տալիս գնալ Հայք՝Արարատյան երկիր՝ Թադեոս առաքյալի վիճակը: Այստեղ է նաեւ, որ կույսերին ասվում է, թե իրենց վիճակված է կյանքն ավարտել նահատակությամբ: Նրանք խնդությամբ շարունակում են իրենց ճանապարհը.ոմանք, բաժանվելով ընդհանուր խմբից, հաստատվում է Եդեսիայում՝ Ս. Թադեի վանքում, ինչպես նաեւ Դարանաղյաց Սեպուհ լեռան այրերից մեկում, որը հետագայում անվանվում է «Մանեայ այր», իսկ ավելի քան յոթանասունը, համաձայն այս պատմության հեղինակի, զանազան այլ վայրերում:

Ինչ վերաբերում է տեղում մնացածներին, նրանք բարի վկայությամբ նահատակվում են Դիոկղետիանոսի կողմից, որն իր չարության թույնը թափում է նրանց վրա: Մնացյալ կույսերը, բազում տառապանքներ կրելով, գալիս հասնում են Բզնունյաց գավառի Խլաթ քաղաքը, այստեղից էլ՝Մոկաց գավառ, այն վայրը, որ հետո կոչվելու էր Սուրբ Խաչ, որտեղ Աստված մեծ սքանչելիքներ է կատարում նրանց միջոցով: Բազում դժվարությունների բախվելուց եւ հրաշքների անմիջական մասնակիցը լինելուց հետո հասնում են Վարագ:

Չամչյանի վկայակոչած պատմության մեջ այս մասին ասվում է. «Եւ ապա փախստեան պատճառաւ ելին ի լեառն Վարագայ ի բարձր տեղին, որ կոչի Գալիլեա. եւ անդ ամփոփեցաւ Ս. Նշանն ի խաչքարին»[14]: Նրանցից ոմանք բնակության տեղեր են պատրաստում լեռան խորշի մեջ, որպեսզի սպասավորեն Ս. Նշանին:

Վարագից դեպի Վաղարշապատ ուղեւորվելիս Հռիփսիմեն հանում է իր պարանոցից կախված մասունքն ու թաքցնում այստեղ՝ Սուրբ Նշանին սպասավորելու թողնելով երկու քահանաների ու մի քանի կույսերի: Հայմավուրքն այսպես է ներկայացնում երթուղին մինչեւ Վաղարշապատ, որտեղ կատարվեց նրանց նահատակությունը. «Փախչելովն ի Հռոմայ

---

13 **Մովսէս Խորենացի,** Սուրբ Հռիփսիմեանների պատմութիւնը, գրաբարից փոխադրեց Գ. Գասպարեանը, «Գանձասար», հատոր Գ, Երեւան, 1993, էջ 7-12:

14 **Մ.Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հատոր Բ, էջ 355:

դէպ յարեւելս բերին զՍուրբ Խաչն ընդ ինքեանս յաշխարհս Հայոց եւ առնէին նովաւ մեծամեծ սքանչելիս, հալածելով զդեւս եւ փարատեալ զամենայն ցաւս: Եւ հասեալ ի գաւառն Տոսպայ եւ բնակեցան ժամանակ ինչ ի վայրն վայելուչ, որ կոչեցաւ Սուրբ Խաչ, եւ այժմ ասի Ղուռուպաշ, որ է ի հարաւոյ կուսէ բերդին Վանայ Շամիրամակերտին: Եւ ապա փախստեան պատճառաւ ելին ի լեառն Վարագայ ի բարձր տեղին, որ կոչի Գալիլիայ եւ անդ ամփոփեցաւ Սուրբ Նշանն ի խաչաքարին, եւ ինքեանք իջեալ ի լեռնէն առաջնորդութեամբ Հոգոյն Սրբոյ եւ գնացեալ հասին ի Վաղարշապատ քաղաք, ուր վկայեցին եւ նահատակեցան»[15]:

Հռիփսիմյանք միայնակ չէին, այլ երկու քահանաների հետ, որ ուրբաթից ուրբաթ Ս. Պատարագ էին մատուցում՝ «արժանավորապես բաշխելով Տիրոջ մարմինն ու արյունը Ս. կանանց»: Այդ քարայրների տեղում հետագայում կառուցվում է Ուրբաթայրք մատուռը, ամենայն հավանականությամբ Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով՝ Հայոց Մեծ դարձից հետո, երբ եւ այստեղ ճգնողներին Լուսավորիչը «քաջալերեալ մխիթարեաց եւ հաստատեաց անդ զեկեղեցիս»: Թեեւ միառժամանակ անբնակ է մնում այս տեղը «ի խստութենէ օդոյն» (Յայսմաւուրք), սակայն, պայմանավորված պատմական այս վայրի նվիրական հիշատակներով, մենավոր ու խաղաղ դիրքով,շատերը գալիս են ճգնության ու վանական դառնալու, որովհետեւ «աւանդութեամբ գիտէին ամենայն աշխարհս Հայոց, զի լինել Սուրբ Նշանին ի լեառն Վարագայ»[16]:

Յոթերորդ դարի կեսերին այստեղ իր Հովել աշակերտի հետ ճգնում է Թոդիկ կրոնավորը, որի երազանքն էր արժանանալ Սուրբ Նշանի տեսությանը: Թոդիկն ասում է՝ «Սուրբ Նշանը համբուրելով՝ Քրիստոսին կհամբուրեմ»: Մի անգամ պասնօրյա պահքն ավարտելուց հետո նա երկնքում տեսնում է «ճաճանչափայլ եւ խաչաձեւ» Սուրբ Նշանը, որն իր լույսով ողողում է շրջակակայքը :Այսպիսով՝ մեկ անգամ եւս շեշտվում է, որ փափագածին կարելի է հասնել պահքով ու աղոթքով: Այս հրաշքի ականատեսն են դառնում ոչ միայն Թոդիկ կրոնավորն ու նրա Հովել աշակերտը, այլեւ շրջակայքի շատ բնակիչներ, ինչպես նաեւ Արծրունյաց իշխանաց իշխան Վարդ Պատրիկը: Սուրբ Նշանի երեւման վավերականությունը շեշտելու համար նրան նվիրված սրբախոսական գործերում եւ սրանց վրա խարսխված հայսմավուրքային տարբերակում պատմագրական երկին բնորոշ մանրամասներով թվարկվում է, թե ովքե՛ր են ականատեսն ու ներկաները դառնում այս երեւման եւ երբ է այն տեղի ունենում:

Վարագում այս մասունքի երեւումը մեր պատմագրության մեջ համեմատվել է Երուսաղեմում Խաչի երեւման հետ: «Սրանց ժամանակ,- գրում է Թովմա Արծրունին, - երեւացին ասպվածային խաչանշանի գանձերը, որի վրա Իր արյունը հեղեց Աստծո Միածին Որդին: Այն պահված էր Վարագա լեռան վրա՝ քարանձավի գագաթին, սուրբ գառան եւ թագավորազն կույսի՝ Հռիփսիմեի ձեռքով: Այն ցույց տվեց Աստված, ինչպես Կոստանդիանոս կայսրի եւ Կյուրեղ հայրապետի ժամանակ»[17]:

Ղ. Ալիշանը ձեռագրային աղբյուրներից բերել է Թոդիկին եւ Վարագա Ս. Նշանին նվիր-

---

15 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռ. 74, թերթ 322ա:

16 Անդ:

17 **Թովմա Արծրունի եւ Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, թարգմ. Վ. Վարդանյանի, Երեւան, 1978, էջ 477:

ված մի պատմություն «Հայրն Թոդիկ ի խաչն Վարագա» խորագրի ներքո, որի հեղինակը, ինչպես ինքն է գրում, ութերորդ դարի երկրորդ կեսին ապրած Հովհաննես քորեպիսկոպոսն է[18]: Այս պատմության մեջ առավել մանրամասն է ներկայացվում Ս. Նշանի գյուտը, ինչպես նաև մի շարք կենսագրական տեղեկություններ են հայտնվում Թոդիկ ճգնավորի մասին: Նա համեմատվում է Ենովք նահապետի հետ, քանի որ ամուսնանալուց եւ որդիներ ունենալուց հետո հրաժարվում է երկրային կենցաղից եւ գնում բնակվում է Վարագա լեռան գագաթին: Զուգահեռ անցկացնելով Վարագի գագաթի եւ դրան դրանիքի հետ՝ պատմության հեղինակը Թոդիկին գեղեցիկ ձեւով համեմատում է այն միայնակ ճնճղուկի հետ, որը բույն է դնում դրանիքում: Շատ դարիներ անցկացնելով ճգնությամբ՝ նա «դասակցեալ լինէր ընդ հրեշտակս»: Այստեղ եւս ասվում է, թե Ս. Նշանը երեւում է Թոդիկի դասնօրյա պահեցողությունից հետո, երբ նախ հրեշտակների գնդերն են իջնում փառաբանելով, եւ ապա «զկնի նոցա երեւալ խաչն ամենազօր եւ սաստիկ լուսով լցեալ լեառնն ամենայն, մինչեւ յաղթեալ արեգակնային ճառագայթիցն»[19]: Հար եւ նման Խաչի պատմությանը, այստեղ եւս ասվում է, որ Սուրբ Նշանի արձակած ճառագայթների լույսն ավելի ուժեղ էր, քան արեւի ճառագայթներինը:

Սուրբ Խաչն այսպես փայլում է կեսգիշերից մինչեւ առավոտյան ժամը վեցը, այսինքն՝ մինչեւ այն ժամանակ, երբ ծագում է արեգակը: Երկնքից նույն լույսով Ս. Նշանն իջնում է եկեղեցին, ուր ճգնավորներն էին: Եկեղեցում Ս. Նշանը մնում է առավոտյան վեցից մինչեւ ժամը ինը. ճգնավորները մեծ երկյուղածությամբ եւ արտասվելով համբուրում են այն:

"Պատմությունն ավարտվում է Վարագի վանական համալիրի շինության եւ լուսավորչահաստատ Ս. Նշան եկեղեցու վերանորոգության մասին հիշատակությամբ. «Եւ շինեցին ԲԺ-ան (12) եկեղեցիս ԲԺ-ան (12) լուսեղէն սեանցն, այլեւ զեկեղեցին, ուր եկեալ Սուրբ Նշանն հանգեաւ, ընդարձակեալ նորոգեցին եւ արարին վանս միաբնակեցաց մեծ եւ հռչակաւոր ի պաշտպանութիւն Սուրբ Խաչին, որ է մինչեւ ցայսօր ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:[20]

Այսպես է ավարտվում Վարագա խաչին եւ վանքին նվիրված պատմությունը, որը Հայսմավուրքներում բերվում է փետրվարի 26-ի ներքո: Այս պատմության վերջին տողերը խորհրդանշում են խաչափայտի ներառումը Վարագա վանքի մեջ, որով եւ հաջորդող շրջանում Ս. Նշանի վրա է խարսխվում վանքի նվիրականությունը:

Քանի որ Ներսես Տայեցին Կաթողիկոս է եղել 641-661 թթ., ապա Վարագում Ս. Նշանի վերահայտնությունը պետք է եղած լիներ այդ ժամանակահատվածում: Ս. Նշանի հայտնվելու ճիշտ ժամանակը որոշելուն օգնում են պատմական երկու կարեւոր սկզբնաղբյուրներ, որոնցից առաջինը Անանուն Զրուցագրի Պատմությունն է, որի՝ Վասպուրականի իշխաններին վերաբերող մասը գրական վերջին խմբագրման է ենթարկվել XI-XII դարերում[21]: Այստեղ ասվում է՝ Վարդ Պատրիկի օրոք «յայտնեցաւ Սուրբ Խաչն, որ ի Վարագ լեառն, եւ էր թվականն Հայոց ԲՃ»[22]: ԲՃ-ի թվային համարժեքը 200-ն է, որին եթե գումարենք 551, կստանանք 751, ինչը չի համապատասխանում ոչ միայն Ներսես Տայեցու գահակալութ-

18 Տե՛ս **Հ. Ղեւոնդ Ալիշան,** Հայապատում, մասն Բ, Ս. Ղազար, Վենետիկ, 1901, էջ 229:
19 Անդ, էջ 230:
20 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռ. 74, 322բ
21 Տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի», աշխատ. Մ. Դարբինյան-Մելիքյանի, էջ 34-35:
22 Անդ, էջ 107:

յան, այլեւ Վարդ Պատրիկի կյանքի տարիներին: Չնայած այս հանգամանքին՝ Անանունի Պատմությունը գրաբար բնագրին զուգադիր ռուսերեն հրատարակած Մ. Դարբինյանը այս նախադասությունը թարգմանում է „В дни его появился святой крест, что на горе Вара-га и был то 200 год армянского исчисления"[23]: Մ. Դարբինյանը բնագրի փողոցակում բերում է այս պատմության՝ մի Ոսկեփորիկում գտնվող խմբագրության բնագրային տարբերթերցվածները: Ոսկեփորիկում ԲՃ-ի փոխարեն գրված է ՃԲ[24], որով Ս. Նշանի երեման թվականն է 653-ը՝ 551+102: Այս թվականը գրեթե համընկնում է Թովմա Արծրունու այն հիշատակության հետ, թե սա այն խաչն է, որը «երեւացել էր 259 տարի առաջ՝ Հայոց Ներսես Երրորդ Կաթողիկոսի եւ Ռշտունյաց Վարդան Պատրիկի օրոք ու Հայոց աշխարհը արաբների գրավելու տարում»[25]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ անուղղակիորեն հիշվում են երկու թվական. առաջինը՝ 259 տարի առաջ, եւ երկրորդը՝ Հայոց աշխարհի՝ արաբների գրավելու տարին: Այդ թիվը որոշելուն օգնում է Պատմության մեկ այլ վկայություն, ըստ որի 211 տարի առաջ տեղի է ունեցել Նախիջեւանի Ս. Գրիգոր եկեղեցու այրումը, որին զոհ գնացին հայ իշխանները: Այս եկեղեցում հայ իշխանների ողջակիզումը տեղի է ունեցել 704 թվականին, ուստի եթե վերջինիս գումարենք 211, կստանանք 915, այսինքն՝ նույն թվականը, որից 259 տարի առաջ, ըստ նույն պատմիչի, տեղի է ունեցել եւ Վարագա Նշանի երեւումը: 915-ից հանելով 259՝ ստանում ենք 656, որը բավականին մոտ է 653-ին, եւ առկա տարբերությունը գալիս է թվականների հաշվման համակարգերի տարբերությունից: Նույն 653-ի հետ համընկնում է եւ այն վկայությունը, որ Ս. Նշանը երեւացել է արաբների՝ Հայոց աշխարհը գրավելու տարում:

Միքայել Չամչյանը եւս, այս երկու իրադարձությունները ներկայացնելով մի գլխում, այն վերնագրել է «Յաղագս նուաճելոյ հայոց ընդ իշխանութեամբ հագարացւոց եւ յունաց, ուր եւ յաղագս Վարգայ խաչի», Ս. Նշանի երեւումը դրել է 653 թ. ներքո՝ գրելով. «...յամի Տեառն 653 եւ ի թուականութեանս Հայոց ***ՃԲ*** եղեւ գիւտ խաչին Վարագայ»[26]:

Ինչպես տեսնում ենք, Անանունի Պատմության ԲՃ-ն Չամչյանը եւս ներկայացնում է որպես ՃԲ՝ կա՛մ բնագիրը ուղղելով եւ կա՛մ նրան հայտնի եղած ձեռագրի հիշատակությունը հաշվի առնելով: 653 թ. իրապես համերաշխվում է նաեւ արաբական ազդեցության հաստատման հետ, քանի որ դրանից մեկ տարի առաջ՝ 652թ., պայմանագիր է կնքվում Թեոդորոս Ռշտունու եւ Արաբական խալիֆաթի՝ Ասորիքի եւ Վերին Միջագետքի կուսակալ Մուավիայի միջեւ, որով Հայաստանը ճանաչում է արաբների գերիշխանությունը:

Ս. Նշանի՝ 653 թ. երեւալը ընդունված է նաեւ մերօրյա գրականության մեջ[27]:

Որ Ս. Նշանի երեւումը, չէր կարող լինել 752 թ., հավաստվում է ոչ միայն Անանունի եւ Թովմայի վկայությունների համերաշխմամբ, այլեւ մատենագրական մի շարք այլ փվյալներով, ըստ որոնց երեւումը տեղի է ունեցել 660-670-ական թթ.: Այս հիշատակությունները հիմնականում հանդիպում են «Մանր ժամանակագրություններում»: Նրանցից երկուսում ասվում է, որ երեւումը տեղի է ունեցել 661 թ.: Այսպես՝ Թովմային եւ Անանունին ժամա-

23 Անդ, էջ 106:
24 Անդ, էջ 107:
25 **Թովմա Արծրունի**, Պատմություն Արծրունյաց տան, հ. Բ, էջ 395:
26 **Հ. Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 355:
27 «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 961:

նակագրորեն մոտ անանուն մի ժամանակագրության մեջ՝ գրված 13-րդ դարում, ասվում է. «661 թվականին խաչ երեւեցաւ ի Վարագ»[28]: Նույն 13-րդ դարում գրված Անանուն Սեբաստացու գրարեգրության մեջ ասվում է. «Ի թվին ՃԺ (661) երեւեցաւ խաչն ի Վարագ ի փառս Քրիստոսի»[29]:

Ս. Նշանի երեւումը 661 թ. ներքո դնելը, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ տարի վախճանվել է Ներսես Տայեցին, եւ ժամանակագիրները ենթադրել են, որ նրա վախճանման տարում է երեւացել Ս. Նշանը:

Հաջորդ հիշատակություններն արդեն պատմական որեւէ փաստով կամ իրադարձությամբ չեն ստուգաբանվում եւ ըստ երեւույթին արդյունք են հեղինակների ոչ ճիշտ ժամանակագրական հաշվումների:

Ս. Նշանի երեւումը թվականով է զարմանալիորեն թվագրում Առաքել Դավրիժեցու նման քննաբան պատմիչը՝ գրելով. «114 (665) թվին հայտնվեց Վարագա Սուրբ Խաչը»[30]: Ս. Նշանի երեւումը 674 թ. է թվագրում 16-րդ դարի մի անանուն ժամանակագիր[31]:

Ղեւոնդ Ալիշանը «Հայապատումի»՝ Վարագին նվիրված բաժնում հրատարակել է մի արժեքավոր բնագիր, որում ասվում է, թե այն գրել է Վարագի տասնմեկերորդ վանահայր Տաճատը: Նրա անվամբ առաջին դեմքով գրված այս բնագրում թվարկվում են նախորդ տասը վանահայրերը եւ դրվատվում է նրանց ճգնակեցությունը: Թոդիկի համար այնուհետեւ գրում է. «Արդ տեառն Թոդկայ առաւել շնորհի արժանի լեալ, զոր եւ պատմագրեալ է Յովհաննու քահանայի սակաւ ինչ ի բազմաց, եւ զգալուստ Սուրբ Խաչին յաղագս սորա ճգնութեանն եւ սրբութեան եւ նոյն պատմագրիս»[32] Ուրեմն Վարագա Ս. Նշանի երեւման պատմությունը եւ Թոդիկի վարքը գրել է նույն այն Հովհաննես քորեպիսկոպոսը, ում գործի բնագիրը հրատարակել է Ղ. Ալիշանը: Նաեւ Թոդիկի առիթով Հովհաննես քահանայի մասին հիշատակությունից ելնելով՝ նա ենթադրում է, որ Հովհաննես անունով այս հեղինակը ապրել է ութերորդ դարի կեսերին: Ամենայն հավանականությամբ, այն հայտնի է եղել ոչ միայն սույններբողի հեղինակին, այլեւ Անանունին, Թովմա Արծրունուն եւ մյուս հեղինակներին, որով պայմանավորված է նաեւ Վարագի մասին նրանց պատմածների ընդհանրությունը:

---

28 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 24:
29 «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 127:
30 Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Հայոց պատմություն, աշխատ. Վ. Առաքելյանի, Երեւան, 1988, էջ 484:
31 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 184:
32 **Հ. Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 424-430: